

## «Ամերիաբանկ» ՓԲԸ ավանդի պայմաններ ֆիզիկական անձանց համար

- 1.1. «Ամերիաբանկ» ՓԲԸ ավանդի պայմանները ֆիզիկական անձանց համար (այսուհետ՝ Պայմաններ) սահմանում են «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) և ֆիզիկական անձի (այսուհետ՝ Հաճախորդ, իսկ երկուսը միասին՝ Կողմեր) միջև ավանդի հետ կապված փոխհարաբերությունների հիմնական պայմանները:
- 1.2. Հաճախորդը Բանկում ներդնում է ավանդ՝ ներկայացնելով Բանկի սահմանած ձևանմուշով հայտ-պայմանագիր (այսուհետ՝ Հայտ-պայմանագիր), որով հաստատում է Պայմանների, «Բանկի կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների» (այսուհետ՝ Հիմնական պայմաններ) և «Բանկի ֆիզիկական անձանց ավանդների նկարագրության և տոկոսադրույքների» ընդունումը (ակցեպտավորումը):
- 1.3. Հաճախորդը ներդնում է Բանկում ավանդ՝ համաձայն Հաճախորդի կողմից Հայտ-պայմանագրում նշված պայմանների:
- 1.4. Հայտ-պայմանագրում ուղղակիորեն նշված՝ ավանդի ներդրման պայմանների հետագա փոփոխությունների մասին Հաճախորդի հանձնարարականը ներկայացվում է Բանկի սահմանած ձևանմուշով, և այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչ այդ նույնանման հարցին վերաբերող հանձնարարականները համարվում են ուժը կորցրած: Պայմանների իմաստով՝ Հայտ-պայմանագրով ներկայացված հանձնարարականներն ու ընտրված պայմանները կիրառելի են դրանց հետագա բոլոր փոփոխություններով:
- 1.5. Ավանդը ներդրվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով, ՌԴ ռուբլով:
- 1.6. Բանկը Հաճախորդին տրամադրում է ավանդային հաշվի քաղվածք՝ ՀՀ օրենսդրությամբ և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով, մինչև հաշվետու ժամանակահատվածին հաջորդող ամսվա 15-ը, եթե առկա չէ այլ կարգավորում: Քաղվածք կարող է չտրամադրվել՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:
- 1.7. Բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում Հաճախորդի պահանջով վերջինիս տրամադրել ավանդային հաշվի քաղվածք՝ գանձելով Բանկի սակագներով՝ քաղվածքի տրամադրման համար սահմանված վճարը:
- 1.8. Բանկում ներդրված ավանդի գումարը Բանկը տնօրինում է ինքնուրույնաբար՝ ապահովելով Պայմաններով սահմանված Հաճախորդի իրավունքները: Ավանդի վերադարձն ապահովված է Բանկին սեփականության իրավունքով պատկանող գույքով:
- 1.9. Ավանդի ներդրման համար Բանկը Հաճախորդի համար բացում է ավանդային հաշիվ, ինչպես նաև Հաճախորդի համապատասխան հայտով՝ ՀՀ դրամով և ավանդի արժույթով ընթացիկ կամ խնայողական հաշիվ(ներ):
- 1.10. Ավանդի ներգրավումը ավանդային հաշվին կատարվում է Հաճախորդի կողմից Հայտ-պայմանագրում նշված հաշվեհամարից:
- 1.11. Բանկը հաստատում է ավանդի փաստացի ներդրումը/համալրումը և Հայտ-պայմանագրի կնքումը՝ Հաճախորդին առձեռն կամ էլեկտրոնային եղանակով տրամադրելով ավանդային հաշվին ավանդի գումարի մուտքագրումը հավաստող փաստաթուղթը կամ այն հասանելի դարձնելով Հաճախորդի կողմից ընտրված հեռահար սպասարկման համակարգում:
- 1.12. Կախված Հաճախորդի կողմից Հայտ-պայմանագրում նշված պայմաններից՝ Բանկը վճարում է Հաճախորդին համաձայն «Բանկի ֆիզիկական անձանց ավանդների նկարագրության և տոկոսադրույքների»՝ սահմանված տոկոսագումարը՝ Հաճախորդի կողմից Հայտ-պայմանագրում ընտրված եղանակով և կարգով:

- 1.13. Ավանդի տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով կամ ավանդի արժույթով՝ ըստ հաճախորդի ցանկության: Արտարժութային ավանդների դեպքում տոկոսագումարը ՀՀ դրամով ստանալու հաճախորդի ցանկության պարագայում տոկոսագումարների փոխարկումը ՀՀ դրամի կատարվում է դրա վճարման օրվա դրությամբ արտարժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:
- 1.14. Ավանդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է ըստ օրացուցային տարվա օրերի՝ համապատասխանաբար 365 կամ 366 օր:
- 1.15. Բանկը հանդիսանում է հարկային գործակալ և Հաճախորդին վճարված տոկոսագումարներից գանձում է հարկեր՝ կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 1.16. Հաճախորդի առաջին իսկ պահանջով՝ վերջինիս դիմումի հիման վրա ավանդը ենթակա է վերադարձման Հաճախորդին:
- 1.17. Բանկը կարող է միակողմանի դադարեցնել ավանդը Հիմնական պայմաններում սահմանված դեպքերում:
- 1.18. Եթե կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով ավանդի նկատմամբ կիրառվել է արտադատական (ներառյալ՝ գրավադրված ավանդից բավարարում ստանալը) կամ դատական կարգով բռնագանձում, Բանկն իրավունք ունի բռնագանձման փաստացի օրվանից Հայտ-պայմանագիրը համարել լուծված՝ կիրառելով ավանդի վաղաժամկետ դադարեցման դեպքում Պայմաններով սահմանված տոկոսադրույքի վերահաշվարկման կանոնները:
- 1.19. Ինչպես Հաճախորդի պահանջով, այնպես էլ Բանկի կողմից միակողմանի ավանդի վաղաժամկետ դադարեցման/ընդհատման դեպքում Բանկը կատարում է վերահաշվարկ և Հաճախորդին վերադարձնում է վերահաշվարկման արդյունքում մնացած ավանդի գումարը: Այդ դեպքում Հաճախորդին վճարվում է տոկոսագումար՝ տվյալ ավանդատեսակի համար սահմանված տոկոսադրույքի փոխարեն՝ «Բանկի ֆիզիկական անձանց ավանդների նկարագրության և տոկոսադրույքների» համաձայն տվյալ դեպքի համար սահմանված տոկոսադրույքով: Այն դեպքում երբ Հաճախորդին արդեն վճարվել են տոկոսներ, որոնք վերահաշվարկման արդյունքում ենթակա են հետգանձման, ավանդի մայր գումարից նվազեցվում է վճարված տոկոսագումարների և հաշվարկված տոկոսագումարների տարբերությունը:
- 1.20. Ավելացման հնարավորությամբ ավանդի դեպքում Հաճախորդը կարող է ավելացնել ավանդի գումարը 2 եղանակով.
- 1.20.1. նախապես Բանկին տրված՝ ավանդի պարբերական համալրման հանձնարարականի հիման վրա: Այս դեպքում ավանդի ներգրավումը (համալրումը) հավաստող փաստաթուղթը տրամադրվում է Հաճախորդին Կողմերի միջև նախապես համաձայնեցված եղանակով (Հաղորդակցման հանձնարարականի համաձայն),
- 1.20.2. յուրաքանչյուր անգամ դիմելով Բանկ՝ ավանդի գումարի ավելացման առանձին հանձնարարականով:
- 1.21. Հաճախորդները կարող են Բանկում ներդնել համատեղ ավանդ: Համատեղ ավանդ ընդունվում է առավելագույնը թվով երկու Հաճախորդների անուններով:
- 1.22. Հաճախորդը կարող է Բանկում ունեցած իր ավանդի տեսակը փոխել համատեղ ավանդի՝ ներկայացնելով Հայտ-պայմանագիր, որը պետք է վավերացվի/ստորագրվի համատեղ ավանդի բոլոր ավանդատուների կողմից:
- 1.23. Համատեղ ավանդ ունեցող Հաճախորդները Բանկի կողմից սահմանված ձևով Բանկ ներկայացվող Ստորագրությունների նմուշների քարտում և վերջինիս մեջ կատարված հետագա փոփոխությունների միջոցով՝ համատեղ համաձայնությամբ սահմանում են համատեղ ավանդի տնօրինման կարգը, որը կարող է լինել հետևյալ տարբերակներից մեկը.
- 1.23.1. համատեղ ավանդը տնօրինում են համատեղ ավանդ ունեցող Հաճախորդներից յուրաքանչյուրը առանձին և առանց որևէ սահմանափակման,

- 1.23.2. համատեղ ավանդը տնօրինում են համատեղ ավանդ ունեցող բոլոր Հաճախորդները միասին՝ ընդհանուր համաձայնությամբ, և այս դեպքում Հաճախորդներից յուրաքանչյուրի համաձայնությունը պարտադիր է համատեղ ավանդի հետ կապված ցանկացած գործառնության/գործողության համար:
- 1.24. Ավանդի ժամկետի վերջում կախված Հաճախորդի կողմից Հայտ-պայմանագրում նշված հանձնարարականից՝
- 1.24.1. ավանդի գումարը Բանկը փոխանցում է Հաճախորդի կողմից Հայտ-պայմանագրում նշված հաշվեհամարին, կամ
- 1.24.2. ավանդը երկարաձգվում է Հայտ-պայմանագրի պայմաններով՝ երկարաձգման պահին Բանկում գործող տոկոսադրույքով: Այս դեպքում ավանդը ենթակա է ինքնաբերաբար երկարաձգման յուրաքանչյուր անգամ ավանդի ժամկետը լրանալուց հետո, մինչև Հաճախորդի կողմից լրացուցիչ գրավոր այլ հանձնարարական/կարգադրություն տալը:
- Ընդ որում, Հաճախորդը կարող է փոխել սույն կետում նշված պայմանը ոչ ուշ, քան ավանդի ժամկետի լրանալուն նախորդող գործառնական օրը:
- 1.25. Ավանդի վաղաժամկետ ընդհատման դեպքում կամ ավանդի նվազեցման դեպքում՝ կախված Հաճախորդի կողմից Հայտ-պայմանագրում նշված հանձնարարականից, ավանդի գումարը/նվազեցման ենթակա ավանդի գումարը Բանկը փոխանցում է Հաճախորդի կողմից Հայտ-պայմանագրում նշված հաշվեհամարին: Ընդ որում հաշվեհամարի նշված չլինելու դեպքում Բանկը փոխանցում է այն Հաճախորդի՝ Բանկում տվյալ պահին գործող ընթացիկ հաշվեհամարին:
- 1.26. Հաճախորդը կարող է Բանկում ներդնել ավանդ հօգուտ երրորդ անձի: Ընդ որում, երրորդ անձը կարող է լինել նաև անչափահաս անձ: Երրորդ անձը ավանդատուի իրավունքներ ձեռք է բերում այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը Բանկի սահմանած ձևանմուշով Բանկ ներկայացնելու պահից, ընդ որում, եթե երրորդ անձը անչափահաս է, ապա նշված պահանջը նա կարող է Բանկ ներկայացնել 18 տարին լրանալուց հետո, իսկ մինչ այդ՝ նման իրավունքը վերապահված է անչափահաս անձի օրինական ներկայացուցչին(ներին): Մինչև երրորդ անձի կողմից ավանդատուի իրավունքների վրա հիմնված պահանջը Բանկ ներկայացնելը, ավանդը տնօրինում է ավանդը ներդնող անձը, ով ստորագրել է Հայտ-պայմանագիրը՝ համաձայն Հատ-պայմանագրով տրված հանձնարարականների և պայմանների:
- 1.27. Ավանդային պայմանագրի պայմանների կամ Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ ավանդային պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող Բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում նախապես տեղեկացնել ավանդատուին նոր պայմանների վերաբերյալ:
- 1.28. Պայմանները գործում են ի լրումն Հիմնական պայմանների, ընդ որում Պայմաններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են Հիմնական պայմաններով, «Բանկի ֆիզիկական անձանց ավանդների նկարագրություն և տոկոսադրույքներով», Կողմերի միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:
- 1.29. Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ Կողմերի միջև ծագած դատական վեճերը ընդդատյա են ՀՀ դատարանին:
- 1.30. Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջոցով: Կողմերի միջև ծագած վեճերի լուծման բացատրական ամփոփագիրը հասանելի է Բանկի տարածքում և Բանկի ինտերնետային կայքում:

1.31. Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

1.32. Պայմանների հայերեն տարբերակը նախապատվություն ունի այլ լեզուներով տարբերակների նկատմամբ: